# ԿՈՄԻՆՏԵՐՆԻ II ԿՈՆԳՐԵՍԸ ԵՎ ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Խ. Հ. ԲԱԴԱԼՅԱՆ
Պատմական գիտություններ դոկտոր

*Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսը (1920 թ. հուլիսի 19-օգոստոսի 7) առանձնահատուկ տեղ է գրավում միջազգային բանվորական շարժումների և Կոմունիստական ինտերնացիոնալի պատմության մեջ։*

*Կոմինտերնի I կոնգրեսից հետո, 1919 թ. սովետական կարգեր հաստատվեցին Բավարիայում, Հունգարիայում, Սլովակիայում, իսկ 1920 թ. ապրիլին՝ նաև Ադրբեջանում։*

*Կոմինտերնի I և II կոնգրեսների միջև ընկած շրջանում սովետական իշխանությունը մի շարք լուրջ հաղթանակներ տարավ սպիտակգվարդիական գեներալներ՝ Յուդենիչի, Կոլչակի, Դենիկինի, Վրանգելի, սպիտակ լեհերի և ճապոնական իմպերիալիստների դեմ։*

*Այս պայմաններում 1919 թ. հունվարին վերականգնված, բայց հեղինակազրկված II ինտերնացիոնալի մի շարք սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ (Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Իտալիայի սոցիալիստական կուսակցություն, Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսացկություն, Անգլիայի անկախ բանվորական կուսակցություն և այլն) դուրս եկան Բեռնի ինտերնացիոնալից և դիմեցին Կոմունիստական ինտերնացիոնալին՝ նրա շարքերն ընդունվելու համար։*

*Այդ կուսակցությունները, սակայն, միայն խոսքով ընդունեցին մարքս-լենինյան ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի մասին, գործնականում նրանք ցանկանում էին կենսագործել իրենց ռեֆորմիստական նպատակները Կոմինտերնում։ Այդ ժամանակ միջազգային կոմունիստական շարժման համար առաջանում է երկու գլխավոր վտանգ. մի կողմից II ինտերնացիոնալից դուրս եկած ցենտրիստական կուսակցությունների փորձերը՝ Կոմինտերնի շարքերը խցկվելու և այնտեղ իրենց քայքայիչ աշխատանքը շարունակելու համար, մյուս կողմից՝ նորաստեղծ կոմունիստական կուսակցություններում «ձախության մանկական բնույթի» սխալների առաջացումը։*

*Վ. Ի. Լենինի «Ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ թեզիսների սկզբունքային ուրվագծեր», «Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ ընդունվելու պայմանները», «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատությունները խոշոր նշանակություն ունեցան Կոմինտերնի II կոնգրեսի անցկացման, II ինտերնացիոնալից դուրս եկած և Կոմինտերնի մեջ մտնել ցանկացող ցենտրիստական կուսակցությունների առջև Կոմինտերնի դռները փակելու, նորաստեղծ կոմունիստական կուսակցություններում «ձախության մանկական բնույթի» սխալները վերացնելու և նրանց շարքերը բոլշևիկացնելու գործում։*

Կոմինտերնի II կոնգրեսում քննության դրվեցին հետևյալ հարցերը. միջազգային դրությունը և Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնական խնդիրները, Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ մտնելու 21 պայմանները, ազգային, գաղութային և ագրարային հարցերը, վերաբերմունք այն ցենտրիստական կուսակցությունների նկատմամբ, որոնք ցանկանում են մտնել Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ, մանիֆեստի հաստատումը և այլն։

Կոնգրեսում Վ. Ի. Լենինը «Միջազգային դրությունը և Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնական խնդիրները» զեկուցման մեջ գիտականորեն վերլուծեց առաջին համաշխարհային պատերազմի և հետպատերազմյան ժամանակաշրջանի բարդ ու խճճված միջազգային հարաբերությունները։

Վ. Ի. Լենինը դատապարտում է այսպես կոչված կապիտալիզմի ավտոմատիկ կրախի վնասակար թեորիան, որի հեղինակները պնդում էին, թե կապիտալիստական կարգերը գաղութների բաժանումն ավարտելուց հետո առանց հեղափոխական պայքարի, առանց ազգային-ազատագրական շարժումների ինքնաբերաբար կրախի կենթարկվեն։

«Միայն բուրժուազիայի բռնի տապալումը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— նրա սեփականության բռնագրավումը, վարից վեր ամբողջ բուրժուական պետական ապարատի՝ պառլամենտական, դատական, ռազմական, բյուրոկրատական, վարչական, մունիցիպալ և այլնի խորտակումը, ընդհուպ մինչև ամենավտանգավոր և համառ շահագործողների գլխովին արտաքսումը կամ մեկուսացումը, նրանց վրա խիստ հսկողություն սահմանելը՝ դիմադրության և կապիտալիստական ստրկության վերականգնման անխուսափելի փորձերի դեմ պայքարելու համար,— միայն նման միջոցներն են ի վիճակի ապահովելու շահագործողների ամբողջ դասակարգի իրական հնազանդեցումը»[1]։

Վ. Ի. Լենինը միաժամանակ ավելացնում է, որ «պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումը չի ընդհատում նրա դասակարգային պայքարը բուրժուազիայի դեմ, այլ, ընդհակառակը, այդ պայքարը դարձնում է առանձնապես լայն, սուր, անողոք»[2]։ Նա միաժամանակ ցույց տվեց, որ միջազգային բանվորական շարժման մեջ II ինտերնացիոնալի կուսակցությունների ղեկավարները «բուրժուազիայի ավելի լայն պաշտպաններ են, քան իրենք՝ բուրժուաները»[3]։

Վ. Ի. Լենինի զեկուցման մեջ առաջադրված ծրագրային թեզերը ուղեցույց հանդիսացան միջազգային իմպերիալիզմի և առաջին հերթին անգլո-ամերիկյան իմպերիալիզմի ու II ինտերնացիոնալի ռեֆորմիստական կուսակցությունների դեմ համաշխարհային պրոլետարիատի պայքարը հաջող կազմակերպելու գործում։ Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսը հաստատեց 1920 թ. հուլիսի 4-ին Վ. Ի. Լենինի մշակած «Կոմունիստական ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսի հիմնական խնդիրների մասին» թեզիսները։ Նրանցում նշվում է, որ II ինտերնացիոնալից դուրս եկած և Կոմունիստական ինտերնացիոնալին միանալ ցանկացող կուսակցությունների առջև դրվում են հետևյալ հիմնական պայմանները.

1. Կոմունիստական ինտերնացիոնալի բոլոր համագումարների և նրա

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, 1952, էջ 218։

2 Նույն տեղում, էջ 222։

3 Նույն տեղում, էջ 278։

Գործադիր կոմիտեի որոշումների հրապարակումը կուսակցության բոլոր պարբերական հրատարակություններում։

2. Այդ որոշումների քննարկումը կուսակցության բոլոր սեկցիաների կամ տեղական կազմակերպությունների հատուկ ժողովներում։

3. Կուսակցության բոլոր շարքերի զտումը ինտերնացիոնալի ոգով գործել շարունակող տարրերից։

4. Կուսակցության բոլոր պարբերական օրգանների անցում բացառապես կոմունիստական խմբագրությունների ձեռքը և այլն։

Լենինի թեզիսների հիման վրա Կոմինտերնի II կոնգրեսը հուլիսի 33-ին հաստատեց Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ ընդունվելու 21 պայմանները։ Այդ կարևոր փաստաթղթում մատնանշված է, որ «II ինտերնացիոնալը վերջնականապես ջախջախված է։ Միջակա կուսակցությունները և «կենտրոնի» խմբերը, տեսնելով ինտերնացիոնալի կատարյալ անհուսալիությունը, փորձում են կոթնել ավելի ու ավելի ամրապնդվող Կոմունիստական ինտերնացիոնալին, սակայն հուսալով միաժամանակ պահպանել այնպիսի «ավտոնոմիա», որը հնարավորություն տա նրանց՝ վարելու նախկին օպորտունիստական կամ «ցենտրիստական» քաղաքականությունը»[4]։ Կոմինտերնի 21 պայմանները պահանջում էին խիստ հսկողություն սահմանել կուսակցական մամուլի նկատմամբ, ռեֆորմիստական տարրերին անհապաղ հեռացնել կուսակցության ղեկավար պոստերից, մերկացնել ոչ միայն բացահայտ սոցիալ-պատրիոտիզմը, այլև սոցիալ-պացիֆիզմն ու ամեն տեսակի երեսպաշտությունը, ցույց տալ բանվորներին, որ կապիտալիզմը կտապալվի միայն հեղափոխական պայքարի միջոցով, բոլոր զորամասերում ստեղծել կոմունիստական կազմակերպություններ Կոմինտերնի մեջ մտնող բոլոր կուսակցությունները վերանվանել կոմունիստական և կառուցել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով։ Նշվում էր, որ ինտերնացիոնալի կազմի մեջ մտնող կուսակցությունները պարտավոր են մերկացնել «իրենց» կառավարությունների գաղութային քաղաքականությունը և այլն[5]։

Կոմինտերնի II կոնգրեսի որոշումները խոշոր նշանակություն ունեցան միջազգային բանվորական շարժման հետագա զարգացման ու ամրապնդման գործում։ Կոնգրեսից հետո մի շարք երկրների սոցիալիստական կուսակցություններում պառակտում սկսվեց, նրանց ձախ թևերը անջատվեցին և ստեղծեցին կոմունիստական կուսակցություններ։

Կոմինտերնի II կոնգրեսը քննարկեց նաև ազգային-գաղութային հարցը։ Վ. Ի. Լենինի ընդարձակ թեզիսները և զեկուցումը քննարկվող հարցի մասին, գործողության լայն ծրագիր դարձան գաղութային և կիսագաղութային երկրներում ազգային-ազատագրական շարժումների հետագա զարգացման համար։ Կոնգրեսն ընդգծեց, որ ազգային-գաղութային հարցի վերաբերյալ Կոմունիստական ինտերնացիոնալի քաղաքականության անկյունաքարը պետք է դառնա բոլոր ազգերի և երկրների պրոլետարիատի և աշխատավոր մասսաների մերձեցումը՝ միացյալ ուժերով հեղափոխական պայքար մղելու կալվածատերերի և բուրժուազիայի տապալման համար[6]։

---

4 Նույն տեղում, էջ 244։

5 Տե՛ս «Коммунистический Интернационал в документах 1919—1932», М., 1933, стр. 100—104.

6 Տե՛ս «Коммунистический Интернационал в документах», М., 1933, стр. 127.

Ազգային-դաղութային հարցին նվիրված իր զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը պահանջում էր, որ կոմունիստական կուսակցությունները բոլոր երկրներում անհաշտ պայքար մղեն ընդդեմ ռեֆորմիստական բուրժուազիայի, որին պատկանում են նաև II ինտերնացիոնալի կուսակցությունները։

Ազգային-գաղութային հարցի առթիվ լենինյան թեզիսների ոգով կոնգրեսում զեկուցումներով և ելույթներով հանդես եկան մի շարք երկրների կոմունիստական կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Կոստանդնուպոլսի կոմունիստական կազմակերպության ղեկավար Իսմայիլ Հակի փաշան հավանություն տալով Վ. Ի. Լենինի թեզիսներին, մերկացրեց երիտասարդ թուրքերի պանթուրքական քաղաքականությունը։ Նա ցույց տվեց, որ 1908 թ. թուրքական հեղափոխությունից հետո երիտասարդ թուրքերն իրենց պլաններում նախատեսում էին Օսմանյան կայսրության մեջ համախմբել մի վիթխարի տերիտորիա, սկսած Կաղանից, Միջին Ասիայից և վերջացրած Կովկասով, Թուրքիայով և Պարսկաստանի հյուսիսային մասով[7]։ Օսմանյան կառավարությունը կայսրության մեջ մտնող բոլոր ժողովուրդների նկատմամբ պետք է վարեր ասիմիլացիայի դաժան քաղաքականություն։

Կոմունիստական ինտերնացիոնալի կոնգրեսում միջազգային իմպերիալիզմի, Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների և II ինտերնացիոնալի կուսակցությունների քաղաքականության մերկացումով հանդես եկան նաև Վրաստանի և Հայաստանի կոմունիստական կուսակցությունների պատվիրակներ Մ. Ցխակայան և Ավիս Նուրիջանյանը։ Մ. Ցխակայան ցույց տվեց, որ վրացական մենշևիկների պարագլուխները՝ Ա. Չխենկելին, Ն. Ժորդանիան իրենց համախոհների հետ բոլոր շանքերը գործադրում են, որպեսզի իրենց կապերը էլ ավելի ամրապնդեն Կաուցկու և մյուս դեղին ինտերնացիոնալիստների հետ[8]։

Դեղին ինտերնացիոնալի պարագլուխներից մեկը՝ Ռենոդելը Թիֆլիսի նախալովկայի շրջանում կայացած մի միտինգում կոչ էր անում մենշևիկյան Վրաստանին՝ անհապաղ պատերազմ սկսել Սովետական Ադրբեջանի դեմ[9]։

Հանդես գալով «Կոմունիզմը Հայաստանում» զեկուցումով, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատվիրակ Ա. Նուրիջանյանը[10] դատապարտեց Անտանտի և ԱՄՆ-ի գաղութային քաղաքականությունը Հայաստանում և II ինտերնացիոնալի դավաճանական գործունեությունը։ Նա բազմաթիվ անհերքելի փաստերով ցույց տվեց, որ դաշնակների բուրժուա-նացիոնալիստական կառավարությունն անգլո-ամերիկյան կառավարությունների և մենշևիկյան Վրաստանի աջակցությամբ արյան մեջ խեղդեց Հայաստանի բանվորների ու գյուղացիների Մայիսյան փառապանծ ապստամբությունը։ Նա մասնավորապես մերկացրեց խմբապետ Սեպուհի վարքագիծը։ Ա. Նուրիջանյանը բազմաթիվ փաստեր է բերում Հայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակի մասին և ցույց տալիս, որ այսպես կոչված «անկախ» Հայաստանը ան-

---

7 Տե՛ս «Протоколы второго конгресса Коммунистического Интернационала», М., 1934, стр. 132—133.

8 Տե՛ս «Коммунистический Интернационал», М., № 15, стр. 3117.

9 Տե՛ս նույն տեղում, էջ 3104։

10 Ծանոթություն. բացի Ա. Նուրիջանյանից Կոմինտերնի II կոնգրեսին մասնակցեցին նաև Հ. Նազարեթյանը և Ա. Ավանեսովը։

կախ է միայն «սպեկուլյանտների համար, մաուզերիստների համար, կուլակների և դենիկինյան սպաների համար, իսկ Հայաստանի բանվորները և գյուղացիները, իրավազուրկ են, ապրում են ծայրահեղ աղքատության մեջ։ Չեկուցողը կանգ առավ նաև հանրապետության տարբեր քաղաքներում և գավառներում գյուղացիների հեղափոխական շարժումների զարգացման և Մայիսյան ապստամբության պարտության պատճառների վրա[11]։

Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսը ընդունեց հատուկ մանիֆեստ՝ ուղղված համաշխարհային պրոլետարիատին և բոլոր կոմունիստական կուսակցություններին։ Ինչպես կոնգրեսի մյուս բոլոր փաստաթղթերի, այնպես էլ մանիֆեստի հեղինակը Վ. Ի. Լենինն էր։

Մանիֆեստում զգալի տեղ է հատկացված վերսալյան սիստեմից հետո ստեղծված միջազգային հարաբերությունների լուսաբանմանը, Անտանտի և ԱՄՆ-ի իմպերիալիստների մերկացմանը։ Այնտեղ հատկապես խոսվում է պատերազմից հետո ամերիկյան իմպերիալիզմի է՛լ ավելի հզորացման և համաշխարհային գերիշխանության հաստատման համար նրա մղած պայքարի և այլ հարցերի մասին։ Համաշխարհային պատերազմը,— նշված է մանիֆեստում.— Միացյալ նահանգներին վերջնականապես դուրս բերեց մայր ցամաքային պահպանողականությունից... «Ամերիկան ամերիկացիների համար» (Մոնրոյի դոկտրինան) փոխարինվեց «Ամբողջ աշխարհը ամերիկացիների համար» իմպերիալիստական ծրագրով»[12]։

Մանիֆեստում տրված է նաև Ազգերի լիգայի բնութագիրը. «Ազգերի լիգան պետք է դառնա յանկիի համաշխարհային մոնոպոլիստական ֆիրման»[13]։ ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանները համաշխարհային գերիշխանության ստեղծման մեծ հավակնություն ունենալով, իրենց պլանների մեջ մտցնում էին մանր պետությունների մի ամբողջ ցանց՝ Ավստրիան, Հունգարիան, Լեհաստանը, Հարավսլավիան, Բոհեմիան, Ֆինլանդիան, Էստոնիան, Լիտվան, Հայաստանը, Վրաստանը և այլն[14]։

Իմպերիալիստական պետությունները և առաջին հերթին ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանները այդ փոքր ժողովուրդների համար ստեղծում էին տնտեսական և քաղաքական սոսկալի դժվարություններ, անվերջ առաջ բերելով կոնֆլիկտներ և արյունալի ընդհարումներ[15]։

Ուշագրավ է իմպերիալիստական տերությունների կողմից Հայաստանում ստեղծված չափազանց ծանր վիճակի նկարագրությունը մանիֆեստում։ Հայաստանը դարձավ Թուրքիայի դեմ Անտանտի մղած պատերազմի զոհը, իսկ երբ Հայաստանը զրկվեց որոշակի սահմաններից և ապրուստի միջոցներից, Վիլսոնը հրաժարվեց Հայաստանի մանդատից, որը նրան առաջարկում էր Ազգերի լիգան[16]։

---

11 Տե՛ս նույն տեղում։

12 Տե՛ս «Протоколы второго конгресса Коммунистического Интернационала». М., 1934, стр. 541.

13 Տե՛ս «Протоколы второго конгресса Коммунистического Интернационала», М., 1934, стр. 541.

14 Там же.

15 Там же, стр. 542.

16 «Коммунистический Интернационал в документах 1919—1932», М., 1933, стр. 142.

Մանիֆեստում ընդգծվեց ինտերնացիոնալի օպորտունիստական կուսակցությունների դեմ անհաշտ պայքար մղելու անհրաժեշտությունը։ Այդ կուսակցությունները բլոկ էին կազմել իրենց երկրների բուրժուազիայի և զինվորական իշխանությունների հետ, ճնշում էին ազգային-տղատագրական շարժումները գաղութային ու կիսագաղութային երկրներում և հեղափոխական շարժումները՝ Եվրոպայում ու ԱՄՆ-ում։

Կոմունիստական ինտերնացիոնալը,— նշված է մանիֆեստում,— պահանջում է բանվորական շարժման շարքերից հեռացնել բոլոր այն առաջնորդներին, որոնք ուղղակի կամ անուղղակի քաղաքական համագործակցությամբ կապված են բուրժուազիայի հետ[17]։

Մանիֆեստում ցույց է տրվում, որ Շեյդեմանը, Էբերտը, Նոսկեն, Ալբերտ Թոման, Վանդերվելդեն, Հենդերսոնը, Ռենները, Զեյցը, Բրաստինգը, Դաշինսկին, Զխեիձեն, Կաուցկին և մյուսները փաստորեն դարձել են բանվոր դասակարգի թշնամիներ և բուրժուազիայի գաղափարախոսներ[18]։

Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսը խոշոր նշանակություն ունեցավ Կոմունիստական ինտերնացիոնալի գործունեության և միջազգային կոմունիստական շարժման հետագա զարգացման համար։ «Կոնգրեսը»,— գրում է Վ. Ի. Լենինը,— ստեղծեց ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցությունների այնպիսի համախմբվածություն և կարգապահություն, որպիսիք առաջ երբեք չկային, և որպիսիք բանվորական հեղափոխության ավանգարդին թույլ կտան յոթմղոնանոց քայլերով առաջ գնալու դեպի իր մեծ նպատակը, դեպի կապիտալի լծի տապալումը»[19]։

Կոմինտերնի II կոնգրեսից հետո, 1920 թ. աշնանը և 1921 թ. սկզբներին մի շարք սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններում պառակտում տեղի ունեցավ։ Այդ կուսակցությունների ձախ թևերը անվերապահորեն ընդունելով Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսի որոշումները, անջատվեցին աջ սոցիալիստներից և ստեղծեցին մի շարք կոմունիստական կուսակցություններ։

1920 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ֆրանսիական սոցիալիստական կուսակցության համագումարը, որտեղ քննարկվեցին Կոմինտերնի II կոնգրեսի որոշումները։ Քննարկման ժամանակ սուր պայքար ծավալվեց ռեֆորմիստների և մարքսիստների միջև։ Համագումարը ճնշող մեծամասնությամբ (3208 կողմ և 1110 դեմ) որոշում ընդունեց 21 պայմաններն ընդունելու և Կոմունիստական ինտերնացիոնալին միանալու մասին։

Կուսակցության մարքսիստական թևը Մարսել Կաշենի գլխավորությամբ հիմնադրեց Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունը։ 1921 թ. հունվարին ստեղծվում է նաև Իտալական կոմունիստական կուսակցությունը։ Այդ ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցություններ են ստեղծվում նաև մի շարք այլ երկրներում։

Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսից մեկ ամիս հետո Սովետական Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում բացվեց Արևելքի ժողովուրդների համագումարը, որին 37 երկրներից մասնակցում էին 1375 պատվիրակներ։

---

17 Նույն տեղում, էջ 157։

18 Նույն տեղում, էջ 155։

19 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 31, 1952, էջ 329—330։

Համագումարը ընտրեց 47 հոգուց բաղկացած խորհուրդ։ Համագումարը որոշում ընդունեց գաղութային-կիսագաղութային ժողովուրդներին ազատագրելու համար պայքար ծավալել իմպերիալիստական երկրների դեմ։ Շուտով սկսեց լույս տեսնել «Արևելքի ժողովուրդներ» խորագրով թերթը, իսկ 1921 թ. Մոսկվայում հիմնվեց Արևելքի ժողովուրդների համալսարանը։

Այն բոլոր ցենտրիստական կուսակցությունները, որոնք բանվորական շարժումների ճնշման տակ և II ինտերնացիոնալի հեղինակազրկվելու պատճառով դուրս եկան Բեռնի դեղին ինտերնացիոնալից և փորձում էին մտնել Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ, մերժում ստանալուց հետո, 1921 թ. Վիեննայում հիմնադրեցին մի ուրիշ ինտերնացիոնալ, որը ստացավ $2^1/_2$ ինտերնացիոնալ անունը։ Նրա գլխավոր քարտուղար ընտրվեց Վիկտոր Ադլերը։ Դա տիպիկ ցենտրիստական կազմակերպություն էր, որի հիմնադիր համագումարին մասնակցեցին 13 երկրների ցենտրիստական կուսակցություններ (Մեծ Բրիտանիայի անկախ բանվորական կուսակցությունը, գերմանական անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության աջ թևը, շվեյցարական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ռուսական մենշևիկներ և այլն)։ Նրա հիմնական նպատակն էր՝ ձախողել միջազգային բանվորական հեղափոխական շարժումը, թույլ չտալ, որ II ինտերնացիոնալից հեռացած բանվորները համախմբվեն Կոմինտերնի շուրջը և հեղափոխական շարժումներ ծավալեն։ «Հանձին $2^1/_2$ ինտերնացիոնալի,— գրում է Ու. Ֆոստերը,— միջազգային բուրժուազիան ստանում է լուրջ աջակցություն»[20]։ Ինչպես պետք էր սպասել, $2^1/_2$ ինտերնացիոնալը պառակտեց բանվորական շարժումները և շուտով 1923 թ. մայիսին, Համբուրգի համագումարում, ամբողջովին ձուլվեց ինտերնացիոնալի հետ։

Վ. Ի. Լենինը մի շարք աշխատություններում, մասնավորապես «Նոր ժամանակներ, հին սխալները նոր ձևով» աշխատության մեջ դատապարտելով II և $2^1/_2$ ինտերնացիոնալների ղեկավարների թշնամական վերաբերմունքը բանվոր դասակարգի նկատմամբ, մատնանշում է, որ «մենշևիկներն ու էսէռները, իսկ արտասահմանում $2^1/_2$ ինտերնացիոնալի բոլոր հերոսները, այն ժամանակ ռեակցիայի խղճուկ աջակիցներն էին»[21]։

1970 թ. օգոստոսին լրանում է Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսի 50 տարին։ Պատմական համեմատաբար այդ կարճ ժամանակամիջոցում միջազգային կոմունիստական շարժումը, որն ընթացել է Կոմինտերնի ուղիով, հսկայական հաջողությունների է հասել։ Եթե 1935 թ. աշխարհում գործել են 61 կոմունիստական կուսակցություններ, ապա 1957 թ. նրանց թիվը հասավ 75-ի, իսկ 1967 թ.՝ 88-ի։ Գնալով աճում է նաև կոմունիստական կուսակցությունների անդամների թիվը։ 1939 թ. կոմունիստների թիվը կազմում էր 4,2 միլիոն մարդ, 1947 թ. այդ թիվը հասավ 20 միլիոնի, 1957 թ.՝ 33 միլիոնի, 1953 թ. 42,5 միլիոնի, իսկ 1967 թ.՝ ավելի քան 50 միլիոն մարդու[22]։ Բնորոշ է, որ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը կոմունիստական կուսակցությունները գերազանցապես գործել են Եվրոպայում և Ամերիկայում, իսկ պատերազմից հետո 74 կոմունիստական կուսակցություններից եվրոպական

---

20 Уильям Фостер. История трех Интернационалов, М., 1959, стр. 329.

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, 1952, էջ 2։

22 Տե՛ս «Новейшая история зарубежных стран Европы и Азии», М., 1968 г., стр. 387—388.

երկրներում են 21-ը, ամերիկյան մայր ցամաքում՝ 24-ը, ասիական երկրներում՝ 18-ը, աֆրիկյան մայր ցամաքում՝ 9-ը, խաղաղօվկիանոսյան կղզիներում՝ 2-ը։ Ընթանալով Վ. Ի. Լենինի և Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսի նշած ուղիով, կոմունիստական կուսակցությունները մեծ ավանդ են ներդրել օպորտունիստական զանազան ուղղությունների, միջազգային իմպերիալիզմի, երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի ջախջախման և սոցիալիստական լագերի ստեղծման ու ամրապնդման գործում։

«Սոցիալիզմի երկրների կոմունիստական կուսակցությունները,— նշել է ընկ. Լ. Ի. Բրեժնևը,— պատասխանատու խնդիրներ են լուծում։ Բարձր պարզելով մարքսիզմ-լենինիզմի դրոշը, եղբայրական երկրների կոմունիստները, ժողովուրդները բազմապատկում են հաջողությունները էկոնոմիկայի, գիտության, կուլտուրայի զարգացման գործում, իսկական ժողովրդական նոր ձևերի ստեղծման ասպարեզում»։ «Հիրավի, դժվար է գերագնահատել այդ գործունեության նշանակությունը, որն ստեղծում է համայն մարդկության ապագա կյանքի նախատիպը»[23]։

## ВТОРОЙ КОНГРЕСС КОМИНТЕРНА И БОРЬБА В. И. ЛЕНИНА ПРОТИВ ОППОРТУНИСТИЧЕСКИХ ПАРТИЙ

Х. О. БАДАЛЯН
Доктор исторических наук

### Резюме

Основатель Коммунистической партии и Советского государства В. И. Ленин вел беспощадную борьбу против международного оппортунизма и центризма, оказывал неоценимую помощь молодым рабочим партиям в деле укрепления их единства на основе марксизма-ленинизма и пролетарского интернационализма.

Эту борьбу Ленин вел с особой решимостью накануне и после создания Коминтерна. В 1919—1920 гг., когда международное революционное движение успешно развивалось под руководством Коминтерна, партии обанкротившегося II Интернационала, опозорившие себя во время первой мировой войны, решили восстановить II Интернационал. Однако расколовшиеся от него центристские партии изъявили желание вступить в Коминтерн, не отказываясь при этом от своей реформистской тактики.

Решения второго конгресса Коминтерна и особенно выработанные В. И. Лениным и утвержденные конгрессом «21 условие» закрыли двери Коминтерна перед центристскими партиями. После этого центристские партии создали 2 1/2 Интернационал, который стал лишь разновидностью Бернского II Интернационала. Разоблачив оппортунистическую сущность этих двух братьев-близнецов, Ленин и Коминтерн развернули широкую принципиальную борьбу против них.

---

23 Լ. Ի. Բրեժնև, Հանուն կոմունիստների համախմբվածության ամրապնդման, հանուն հակիմպերիալիստական պայքարի նոր վերելքի, Երևան, 1969, էջ 17։